««ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ և ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-23/2

ք. Երևան «16» հունվար 2023թ.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս Գործադիր տնօրեն՝ Ա. Պարզյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լոռե Թրավել» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Դոխոյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 3,000,000.00 (երեք միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև հանձման-ընդունման արձանագրությունների երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Պատվիրատուն վճարումը կատարում է իրեն փաստացի մատուցած ծառայության դիմաց՝ հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, իսկ մինչև տարեվերջ պահանջ չներկայացվելու դեպքում չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին է ներկայացնում համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 52480102656710000
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն՝------------------- Ա. Պարզյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Լոռե Թրավել» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Չարենցի 4
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570083668230100
ՀՎՀՀ 06954954

Տնօրեն -------------------- Ա. Ռոխոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«16» հուլիսի 2023թ. կնքված
ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-23/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
հ/հ	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը)	չ/մ	ընդհանուր քանակը	ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ	մատուցման	
							հասցեն	Ժամկետը**
1	55111100/501	Հյուրանոցներում բնակվելու ծառայություններ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մարզային տարածքային սպասարկման կենտրոնների *աշխատանքը կազմակերպելու համար* ՀՀ մարզերում «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների Հիմնադրամի աշխատակիցների գիշերակացի համար հյուրանոցներում բնակվելու ծառայություններ, որը պետք է ապահովի առնվազն հյուրատների և/կամ հյուրանոցների տրամադրում, որոնք պետք է տեղակայված լինեն քաղաքների բանուկ հատվածներում: Պատվիրատուի կողմից ծառայությունների մատուցման օրը նախապես՝ առնվազն 5 օր առաջ, համաձայնեցվում է Կատարողի հետ: Հյուրանոցի ամրագրման և չեղարկման գնային ռիսկերը կրում է ծառայություններ մատուցողը:Գիշերակացն ապահովելու համար անհրաժեշտ են մեկտեղանոց և երկտեղանոց սենյակներ, յուրաքանչյուր սենյակում պետք է ապահովվի ստանդարտ կարգի պահանջներ, (տաք և սառը ջուր, հետուստացույց, սանհանգույց, անհրաժեշտությունից ելնելով և պատվիրատուի պահանջով օդորակիչ (տաք և սառը օդի հնարավորությամբ, հեռակառավարման վահանակով), սառնարան: Ծառայությունը պետք է իր մեջ ներառի նաև նախաճաշ, սենյակների շուրջօրյա սպասարկում:	դրամ	1	3000000	ՀՀ տարածքում՝ ըստ պատվիրատուի պահանջի, իսկ արդյունքները ներկայացվում են ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցի 68 հասցեով	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից՝ մինչև 30.12.2023թ-ը ներառյալ, պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի

			«Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների Հիմնադրամի *աշխատողների խրախուսումն կազմակերպելու համար* ՀՀ մարզերում գիշերակացի համար հյուրանոցներում բնակվելու ծառայություններ, որի շրջանակներում պետք է ապահովվի առնվազն 4 աստղանի հյուրանոցների տրամադրում, որոնք պետք է տեղակայված լինեն քաղաքներում: Պատվիրատուի կողմից ծառայությունների մատուցման օրը նախապես՝ առնվազն 5 օր առաջ, համաձայնեցվում է Կատարողի հետ: Հյուրանոցի ամրագրման և չեղարկման գնային ռիսկերը կրում է ծառայություններ մատուցողը: Գիշերակացն ապահովելու համար անհրաժեշտ են մեկտեղանոց և երկտեղանոց սենյակներ, յուրաքանչյուր սենյակում պետք է ապահովվի ստանդարտ կարգի պահանջներ, (տաք և սառը ջուր, հետուստացույց, սանհանգույց, անհրաժեշտությունից ելնելով և պատվիրատուի պահանջով օդորակիչ (տաք և սառը օդի հնարավորությամբ, հեռակառավարման վահանակով), սառնարան: Ծառայությունը պետք է իր մեջ ներառի առնվազն երկու անգամյա սնունդ, սենյակների շուրջօրյա սպասարկում:					1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները

* Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան ֆինանսական միջոցներ նախատեսվելու տարվա դեկտեմբերի 30-ը:

** Սույն գնման ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և այունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները:

Յուրաքանչյուր անվանատող հանդիսանում է առանձին չափաբաժին:

****Ծառայությունները պետք է մատուցվեն համաձայն Հավելված 1.1-ով սահմանված ձեւաչափով մասնակցի կողմից տրամադրվող գնացուցակի:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

««Նորք» սոցիալական ծառայությունների
տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն»
հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 52480102656710000
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն՝ _____ Ա. Պարզյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Լոռե Թրավել» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Չարենցի 4
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700836682301 00
ՀՎՀՀ 06954954

Տնօրեն՝ _____ Ա. Պոխոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«16» հունվարի 2023թ. կնքված
ՆՄԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-23/2 ծածկագրով պայմանագրի

ԳՆԱՑՈՒՑԱԿ
մատուցվող ծառայությունների

N	Հյուրանոցային ծառայության մատուցման վայր	«Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների Հիմնադրամի աշխատակիցների աշխատանքի կազմակերպման համար /ՀՀ դրամ/		«Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների Հիմնադրամի աշխատակիցների խրախուսման համար /ՀՀ դրամ/	
		Գինը՝ 1 օրվա հաշվարկով մեկտեղանոց սենյակում	Գինը՝ 1 օրվա հաշվարկով երկտեղանոց համարում	Գինը՝ 1 օրվա հաշվարկով մեկտեղանոց սենյակում	Գինը՝ 1 օրվա հաշվարկով երկտեղանոց համարում
1	Արագածոտնի մարզ	15000	18000	38000	46000
2	Արարատի մարզ	16000	19000	33000	39000
3	Արմավիրի մարզ	14000	16000	18000	28000
4	Գեղարքունիքի մարզ	18000	22000	33000	39000
5	Լոռու մարզ	16000	22000	28000	34000
6	Կոտայքի մարզ	16000	21000	38000	44000
7	Շիրակի մարզ	22000	27000	28000	34000
8	Սյունիքի մարզ	26000	30000	28000	34000
9	Վայոց Ձորի մարզ	23000	27000	33000	38000
10	Տավուշի մարզ	22000	27000	38000	43000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2480102656710000
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն՝ ____________ Ա. Պարզյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Լոռե Թրավել» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Չարենցի 4
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570083668230100
ՀՎՀՀ 06954954

Տնօրեն ____________ Ա. Դոխոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու «____» _____ 2023թ. նիստի
որոշման

ԱՇՏԱՐԱԿ ԱՄՍԱԹՎԱԿԱՆԱՑԻ

	Ընդհանուր գումարը	Հունվարը	Փետրվարը	Մարտը	Ապրիլը	Մայիսը	Հունիսը	Հուլիսը	Օգոստոսը	Սեպտեմբերը	Հոկտեմբերը	Նոյեմբերը	Դեկտեմբերը	Ընդամենը	Ընդամենը քաղաքի սահմանների համար	Հ/Ն	Ծառայությունների անվանումը	Ծառայությունների հաշվարկման միավորը	Ընդամենը ՀՀՊՀ սահմանված գնի դրամական արտահայտությամբ	Միջնորդի անվանումը
	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%				
Ընդամենը	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%				
1	551111100/501	Սիջնորդական ծառայություններ, ըստ ՀՀՊՀ դասակարգման	Հաշվարկային միավոր	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	Ծառայությունների մատուցումը	Հաշվարկային միավոր	1	Հանրային գնումների ինքնակարգավորման կազմակերպություն ՀՈԿԳ

Գումարն՝ 1 (միավոր)

ԱՇՏԱՐԱԿ ԱՄՍԱԹՎԱԿԱՆԱՑԻ

Պատվիրատուն՝ «Տաշիրի համայնքային կենտրոն» ՀՈԿ-ի տնօրեն Ս. Գրիգորյան

Կ.Տ.

(ստորագրություն)

Կատարող՝ «Լոռի Թրեյդ» ՍՊԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Շամլղյանի 4
«Ընդհանուր» ՓԲԸ
ՀՀ 15708036823010 0
ՀՀՀՀ 06954954

Տ.Գ.

(ստորագրություն)

Ս. Գրիգորյան

(ստորագրության տվյալներ)

Կ.Տ.

(դիրքագրություն)

Փոխտնօրեն

ԱՇՏԱՐԱԿ

«Հոլդինգ» սոցիալական ծառայությունների կենտրոն
«Վանաձորի տարածքային կենտրոն»
ՀՀ, ք. Վանաձոր, Տիտաժան Ուսկեցու 68
«Վարչական» ՓԲԸ
ՀՀ 52480102656710000
ՀՀՀՀ 02602449

Հավելված 3
«____» _____ 2023թ. կնքված
ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-23/2 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«____» _____ 2023թ. կնքված
ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-23/2 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

16.01.2023 թվականին կնքված **N ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-23/2** գնման պայմանագրի

ք. Երևան «06» վեբրվար 2023թ.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն՝ Ա. Պարզյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լոռե Թրավել» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Դոխոյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 16.01.2023թ. կնքված **N ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-23/2** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 7.5 և 7.15 կետերը և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված ծառայությունների ձեռքբերման համար հատկացված առավելագույնը **3,000,000.00 (երեք միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**, շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1. Հաստատել Պայմանագրի վճարման ժամանակացույցը ըստ սույն համաձայնագրի հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ	«Լոռե Թրավել» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68	ՀՀ, ք. Երևան, Չարենցի 4
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 52480102656710000	Հ/Հ 1570083668230100
ՀՎՀՀ 02602449	ՀՎՀՀ 06954954
Գործադիր տնօրեն՝---------- Ա. Պարզյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն՝---------- Ա. Դոխոյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
«16» հունվարի 2023թ. կնքված
N ՆՄԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-23/2 ծածկագրով պայմանագրի
«06» փետրվար 2023թ. կնքված
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	Ծառայության անվանումը	Չ/մ	Ընդհանուր քանակը	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝												Ընդհանուր առավելագույն գինը
					I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
1	55111100/501	Հյուրանոցներում բնակվելու ծառայություններ	դրամ	1	750000	750000	750000	1500000	1500000	1500000	2250000	2250000	2250000	3000000	3000000	3000000	3000000
Ընդհամենը՝																	**3 000 000**

*Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի հրապարակած, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

** Պատվիրատուն վճարումը կատարելու է իրեն փաստացի մատուցած ծառայության դիմաց՝ հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, իսկ մինչև 30.12.2023 թվականը պահանջ չներկայացվելու դեպքում չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

««Նորք» սոցիալական ծառայությունների
տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն»
հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 52480102656710000
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն՝ _____ Ա. Պարզյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Լոռե Թրավել» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Չարենցի 4
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570083668230100
ՀՎՀՀ 06954954

Տնօրեն՝ _____ Ա. Դոխոլյան
(ստորագրություն)
Կ.Տ.